թեամբ է, սակայն խիղճն մնայ: Նոյնպէս եւ որ տպիտութեամբ հաղորդի՝ խիղճն դատէ, եւ որ դիտութեամբ մեղանչէ՝ պատժիցի: Արդ՝ եթէ ոք զձեզ ընդունի կամ առ ի ձէնջ զմկրտեալն՝ ձե՛ղ լիցի հաղորդ:

Եւ զայս ասացեալ՝ արձակեաց զնա մեծաւ թշնամանաւք յԱնտիոք, ժամ տուեալ, զի ինքն իսկ առ թագաւորն եկեսցէ եւ ժողով մի վասն նորա արասցեն:

Իսկ զերանելին Կեղեստինոս, դաւով, նենգութեամբ ի կենցաղոյս վճարեալ, յետ սակաւ աւուրց յամպարիշտ պաշտաւնէից[59], եւ ինքեանք յեղիպտոս վախուցեալ թաքստեամբ[60] կացին ի թագաւորէն ամս Դ: Եւ Բարսումայի ա՛նդ զվարդապետութիւնն[61] իւր սկսաւ ուսուցանել, սկսեալ յեղիպտոսէ մինչեւ ի կողմանս Ասորոց, զի ունէր համախոհ զընկերակիցս իւր: Եւ յետ Գ. ամի վախճանեցաւ ի ճանապարհին ի Բոմբոս քաղաքի: Բայց յեղիպտոս այնչափ զիրան սերմանեաց, մինչ զի ըստ սովորութեան ոմանք զհերձուածն կատարեն, զխմորեալ հերձուածն ուսան[62] հայհոյական բազմութեանն[63] այնպէս որոշեն զանձինս ի կարծել հերձուածոյն. զոր իբրեւ ֆաղկեդոնի հերձուածն հաստատեցաւ՝ հրամանեւ Լեւոն Հռոմայ հայրապետն եւ Ցուբնաղ Երուսաղէմի ընդունել զայն մկրտեալսն, ծածկելով զիարսումայի անունն՝ կոչեցին զինքեանս Յակոբիկս, որպէս թէ ի վաղնճուց իսկ Յակոբայ Մծբնայէ են ուսեալ զայն: Եւ զայս հաստատեաց ղչարութիւնս Իբաս Եդեսեայ հայրապետն յորժամ դարձեալ ընկալաւ զիւր աթոռն՝ հակառակ լեալ Դիոսկորոսի որ զինքն ի պատուոյն մերժեաց: Զայս ամենայն գտանես ի չորրորդ գիրս որ ընդդէմ Աթանասի ապականագործի, եւ է այն ի Ժ. երորդ ճառին, եւ են չորեքեանն յԱղեքսանդր, եւ երիս գլուխ գիրս սրբոյն Դիոսկորոսի մերձ առ սրբոյն Կիւրղի: Փառք անապական Բանին Աստուծոյ հանդերձ կենդանատու Հարբն եւ Հոգւովն Սրբով[64], ամէն:

Յ. Ս. ԱՆԱՍԵԱՆ

59 Բ պաշտօնից:
60 Աբ թաքստեամբ:
61 Բ զվարդապետութիւն:
62 Աբ ուսան (գուցէ ուղղելի՝ ուսեալ):
63 Բ բազմութեան:
64 Աբ Հոգւոյն սրբոյ:

ԿՈՐԻՒՆԻ ԳՐՔԻ «ԱՄՍ ԵՐԿՈՒ»–Ն ԵՒ ՎԵՐՋԱԲԱՆԸ

Այսօր համարեա ամէն ոք հայոց գրերի դիւտի տարեթիւը համարում է 406–ը, թէեւ բանասէրներ ու պատմաբաններ ժամանակին առաջարկել են նաեւ 383–ից մինչեւ այդ ընդունուած թուականն ընկած զանազան տարիներ: Բոլորն էլ հիմնուել են Կորիւնի «Վարք Մաշտոցի» գրքի չարաշրջանքի ընթացքում եւ վերջին տասը տողերում հաղորդուած ժամանակագրական տուեալների վրայ. սակայն քանի որ ըստ ոմանց այդ տեղեկութիւնները հակասում են թէ՛ միմեանց եւ թէ՛ սկիզբի տուեալներին, ուստի առաջարկել են բնագրի տարեթուերի փոփոխութիւններ, եղնելով ոչ թէ ձեռագրական հիմքերից, որոնք գոյութիւն չունեն, բոլոր ձեռագրերը յայտնի են, այլ՝ գարսկաստանի պատմութեան ժամանակագրական տուեալներից: Եւ ըստ այնմ կատարել են հայոց գրերի դիւտի թուականի հաշիւները, իւրաքանչիւր գիտնական իւրովի: Հայրենի բանասէր–պատմաբան Բագրատ Ուլուբաբեանն այս բոլորը համառօտակի յիշեցրել է «Սովետական Հայաստան» ամսագրի 1983 թ. 5–րդ համարի էջ 26—31–ում հրատարակած «Հայոց գրերի դիւտի տարեթիւը 393–ն է» հանրամատչելի յօդուածում, որի եզրակացութիւնն արդէն վերնագրում է: Նա հիմք է ընդունել Կորիւնի եւ մի քնադարեան հայ պատմագիրների բնագրային տուեալները, ոչ թէ Կորիւնի գրքի թուականները սրբագրելով, այլ նրա բնագրից դուրս վանելով հանրածանօթ եւ պայծառ ղուկասեան քար ամս երկու–ն (ըստ մի սրբագրութեան՝ ամիսս երկու) եւ, մանաւանդ, վերջաբանը որպէս օտար յաւելում: Հաւանաբար ամսագրի հանրամատչելի բնոյթն է, որ գիտնականին թոյլ չի տուել մանրամասն քննարկելու արտայայտուած բոլոր կարծիքները, այնուհանդերձ նա ասել է յատակօրէն հիմնականը: Միանգամայն համամիտ լինելով նրան՝ կ'ուզենայինք անդրադառնալ բնագրի այդ երկու տեղերին:

1. ԱՄՍ ԵՐԿՈՒ

Կորիւնը հաղորդում է, որ Հայաստանի պարսկական մասի հայ վռամշապուհ արքայի գահակալութեան 5–րդ տարում է, որ արքայի խնդրանքով Հարքլը Միջագետքից վաղարշապատ է ուղարկել արքային, և սա Սահակ կաթողիկոսին ու Մեսրոպին է յանձնել դանիէլեան կոչուած նշանագրերը[1]: Երկու ուսուցիչները, ուրախացած, արքայից ստանալով մատաղ մանուկներ՝ սկսել են այդ նըշանագրերով պարապել, «եւ երբ նրանցից չատերը սովորեցին, ապա (թագաւորը) հրամայեց ամէն տեղ նոյն (նշանագրերով) կրթել. որով և երանելին (այսինքն՝ Մաշթոցը) հասաւ նոյն իսկ վարդապետական դեղեցիկ աստիճանին, և մօտ երկու տարի[2] իր ուսուցչութիւնն արեց ու նոյն նշանագրերով տարաւ: Իսկ երբ հասկացան, որ այդ նշանագրերը բաւական չեն հայերէն լեզուի սիզորանները — կապերն ամբողջութեամբ արտայայտելու համար ... ապա դարձեալ երկրորդ անգամ նոյն հոգսի մէջ ընկան և մի քանի ժամանակ մի ելք էին փնտռում դրան»[3]: Այս նպատակով Մաշտոցը մի «դաս» աշակերտներով նոյն վռամշապուհի թագաւորութեան 5–րդ տարում[4], արքայի հրամանով և Սահակի համաձայնութեամբ մեկնում է Միջագետք և իր արարած հայկական այբուբենով վաղարշապատ է վերադառնում նոյն թագաւորի 6–րդ տարում[5]: Ինչպէս անմիջապէս նկատելի է, Մաշտոցի մեկնումը թուականը՝ «խաղայր գնայր ի հիւգերորդ ամի վռամշապհոյ արքային հայոց», խախտում է դանիէլեան նշանագրերի ամս երկու ուսուցման տեւողութեամբ. ուստի բազմաթիւ նասէրներ ու պատմաբաններ արել են ճշգրտութիւններ, որոնցից մի քանիսը յիշեցրել է Բ. Ուլուբաբեանը. մենք նշենք Մ. Աբեղեանի կարծիքը. «Վռամշապուհի» «հինգերորդ տարի» թուականն աղճատուած

1 Կորիւն, Վարք Մաշտոցի, Երեւան, 1941, հրատ. և թարգմ.՝ Մանուկ Աբեղեան, էջ 44:
2 Բնագրում՝ «իբրեւ ամս երկու»:
3 Անդ, էջ 44 և 46—47:
4 Անդ, էջ 46—47:
5 Անդ, էջ 50—51:

233-34

© National Library of Armenia

է: Վռամշապուհի հինգերորդ տարում «Դանիէլեան» կոչուած նշանագրերը հասցնում են թագաւորին. մօտ երկու տարի սովորեցնում են այդ տառերով, յետոյ երբ այդ նշանագրերը բաւական չեն դանում, մի քանի ժամանակ, ուրեմն 1—2 տարի[6], նոյն հոգսի մէջ են ընկնում, և ապա նոր, 3—4 տարի յետոյ[6], Մաշտոցը գնում է Միջագետք: Ուրեմն այդ չէր կարող կատարուել նոյն հինգերորդ տարում: Աղճատուած է երևում և Միջագետքից վերադառնալու տարին — Վռամշապուհի վեցերորդ տարին»[7]:

Բ. Ուլուբաբեանը նկատի է առել միայն բնագրի ամս երկու–ն (առանց հաշուի առնելու ոմանց ամիսս երկու սրբագրութիւնը). նրա կարծիքով՝ Կորիւնի դրքի սկզբնական օրինակներում դա չի եղել, որովհետեւ Մովսէս Խորենացու «Պատմութեան» մի պատառիկում, որ Մատենադարանում յայտնաբերել է բանասէր Մ. Քոլանջեանը[8], դրա փոխարէն կայ «տղայս զոմանս սակաւս», առանց ուսուցման ժամանակի նշման: Սակայն «Պատմութեան» տպագրում կարդում ենք «ամս սակաւս»: Մ. Քոլանջեանի կարծիքով՝ Կորիւնի դրքի նախնական օրինակներում ամս երկու–ի փոխարէն եղել է ամիսս երկու իբրև դանիէլեան գրերով ուսուցման տեւողութիւն: Հարցի վերջնական լուծումը թողնելով խորագնին քննութեան՝ Բ. Ուլուբաբեանը յամենայն դէպս բացառում է ամս երկու–ն: Մենք կը բացառէինք նաև ամիսս երկու–ն: Մեզ զարմացնում է Կորիւնի դրքից վերևում մեր կատարած մէջբերումը դանիէլեան գրերով Մաշտոցի պարապմունքների տեւողութեան մասին. արդարև Սահակն ու Մեսրոպը, որոնք յունական կրթութիւն ըստացած և զարգացած անձնաւորութիւններ էին, առանց անճամբ քննելու և փոքմարիկելու ստացուած նշանագրերը, աշխատել են դրանք սովորեցնել աշակերտների, որոնցից չատերը դրանց տեղեկանում են, ապա Մաշտոցը երկու տարի կամ նոյն իսկ երկու ամիս յետոյ է անդրադառնում (Սահակի հետ անչուշտ), թէ այդ գրերը պիտանի չեն հնչիւններով հարուստ հայոց լեզուն գրի առնելու: Մեր երկու ռահվիրաններն ինչպէ՞ս կարող էին այդպիսի թեթեւ քայլ առնել, երբ երկու օրն անդամ բաւական էր ստացուած նշանագրերը փորձարկելու, դրանց անբաւականութիւնը յայտնաբերու, առանց ամօթով հետ դառնալու թագաւորի և մանուկների առաջ: Ուստի Բ. Ուլուբաբեանի հետ համամիտ ենք, որ ուսուցման տեւողութեան նշումը օտարամուտ կամ աղճատում է, և հաւատում է մեզ Մաշտոցի ճանապարհորդութեան ու վերադրաձի ժամանակը այնպէս, ինչպէս դրուած է բնագրում:

2· ԿՈՐԻՒՆԻ ԳՐՔԻ ՎԵՐՋԱԲԱՆԸ

Կորիւնի դրքի վերջաբան ենք համարում վերջին 10 տողերը, որոնք պարսիկ թագաւորների դահակալութեան տարեթուերի վրայ հիմնուած ժամանակագրական տուեալներ են Մաշտոցի կրօնաւորութեան տեւողութեան և սկզբի ու հայոց դպրութեան սկզբնաւորման մասին. դրանք անգնահատելի արժէք կ'ունենային, եթէ իրար և վերևում տրուած տարեթուերին չհակասէին: Դրանից առաջ Կորիւնը յոգնակի առաջին դէմքով, ինչպէս սովոր է խօսել, դրել է հետեւեալ իմաստալից տողերը, որոնք յատկանշական նութեան չունէ ունեն. «Աստուած ոչ ի պատիւ ինչ սրբոցն Աստուծոյ, որք ամենապայծառ հաւատով եւ վարուք ծանուցեալք յարդեցան, այլ յատկինակ քաջալերիչ՝ հոգեւոր ծննդոց իւրեանց, եւ որք նոքաւք աշակերտելոց իցեն յաղտս ազգաց»[9]: Այս բարձրաթռիչ միտքը համարեա նոյն բառերով կայ նաև Ագաթանգեղոսի դրքի վերջում, բայց Լուսաւորչին և Տրդատ թագաւորին յարմարեցրած: Ահա այս «յաղտս ազգաց» տանող տողերին յաջորդում են հետեւեալ երկու պարբերոյթները, որ վերջաբան ենք համարում, և ըստ Բ. Ուլուբաբեանի՝ օտարամուտ են.

«Եւ արդ լինի համար ամաց հաւատոց երանելոյն ամք քառասուն և հինգ[10], և ի դպրութենէն Հայոց մինչև ցվախճան սրբոյն՝ ամք երեսուն և հինգ, որք համարին այսպէս. Թագաւորեալ կրմանայ[11] Պարսից արքայ. և ձագկերտի ամս քսան և քայի ամս վեց[12]. և Ցազկերտի ամս քսան և մի (և վռամայ ութ և տասն)[13], և յառաջնումն ամի երկրորդ Ցազկերտի՝ որդւոյ Վռամայ[14], վախճանեցաւ երանելին:

Եւ արդ առնու համար ամաց սրբոց հաւատոց ի չորրորդում ամէն կրմանայ[15] արքայի մինչև ցառաջին ամն երկրորդ Ցազկերտի որդւոյ Վռամայ[16], և դպրութեանն Հայոց յութերորդ[17] ամէ Ցազկերտի[18] առեալ սկիզբն:

Եւ Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեան. ամէն»:

Որոշ բանասէրներ անվերապահօրէն են ընդունել այս համաժամանակեայ տուեալները և դրանք համարել դրքի չարադրանքի ընթացքում տրուած մի քանի տեղեկութիւններին համապատասխան. ուրիշներ սրբագրելու համաձայնեցնելու և յարմարացնելու համար. ըստ Գ. Ֆնտզլեանի՝ «Կորիւն մէկ սխալ կ'ընէ» վերջաբանում. և այլն: Բ. Ուլուբաբեանը վերջաբանում. և այլն: Բ. Ուլուբաբեանը վերջաբանում. և այլն: Բ. Ուլուբաբեանը

որ նրա ենթական է նաև «ամէ երեսուն եւ հինգ»ը:

2· Բոլոր բանասէրները վերջաբանի հաւատոց — հաւատք բառը թարգմանել են «կրօնաւորութիւն», թէև զրաբարի բառարաններին ծանօթ չէ բառի այդ իմաստը: Նորայրն իր բնագրի լուսանցքում դրա մասին դրել է· «Այսպէս և լատ· conversio նշանակէ և մուտք վանական կեանքի մէջ» (Ֆրանսերէն, լատիներէնի մի աղբիւրից վերցնելով, սակայն լատիներէնի բառարաններում նշուած չէ)· իր Կորիւն աշխատութեան էջ 386–ում գրել է՝ «Մաչտոցի հաւատքն, որ է կրօնաւորութիւնն»: Գ· Ֆնտզէեանը «Հաւատոց երանելւոյն»–ի մասին գրել է· «կրօնաւորելուն» հմմտ· եղիչէ «կանայք հաւատարմ[ո]ւորք», այսինքն՝ «կրօնաւորեալ կիներ»[22]: Մ· Աբեղեանը հաւատոց–ը բնագրում թարգմանել է «հաւատքի» և էջատակում՝ «կրօնաւորութեան»: Ցամենայն դէպս հաւատք բառի «կրօնաւորութիւն» նշանակութիւնը դասական չէ: Կորիւնը էջ 70, տող 4–ում գործածել է «արք կրաւնաւորք» բառերը, իսկ Մաչտոցի մասին ասել է՝ «Անդէն վաղվաղակի ի միայնակեցական կարգ մտանէր» (էջ 38, տ· 6), «զանճն տուեալ միայնակրութեան» (ն· տ·, տող 8—9)· էջ 40, տ· 1 «Առեալ այնուհետեւ երանելւոյն գիտացեալս իւր», որի ընդգծուածը բառը Մ· Աբեղեանը թարգմանել է բնագրում «հաւատացեալներին», իսկ տողատակում՝ «Այսինքն՝ իր հաւատացեալ աշակերտներին, սակայն մեզ թւում է, որ պիտի թարգմանուէր «հաւատարիմներին», քանի որ «հաւատացեալ» բառն արդի հայերէնում հանրածանօթ իմաստն ունի· ՆՀԲ–ում այս բառի 2–րդ իմաստն է հենց «հաւատարիմ»:

3· Վերջաբանը ներմուծողը «յառաջնումն ամի երկրորդ Ծաղկերաի՝ որդւոյ Վռամայ» բառերը վերցրել է նոյնութեամբ Կորիւնից՝ էջ 86, տ· 20—21, երբ խօսում է Սահակ Պարթեւի մահուան մասին, առանց նոյնը կրկնելու Մեսրոպի վախճանի առթիւ:

4· Եւ արդ–ը երկրորդ անգամ աւելորդ է, քանի որ կայ մի քանի տող առաջ:

5· Առնու համար· սա դասական բնոյթ չունի, քանի որ նրա առնու–ն անպայման կրաւորական սեռի է: Հաւանաբար Նորայր Ն· Բիւզանդացուն էլ կասկածելի է թուացել այս, քանի որ տողամիջում դրել է «[սկիզբն] առնի», իսկ իր Կորիւն–ում, էջ 387, «[սկիզբըն?] առնու»· Մ· Աբեղեանն առանց մտահոգուելու թարգմանել է «հաշիւն սկսում է»: ՍԳ–ում գործածուել են առնուլ համար «հաշուել» և նոյն իմաստով առնել համար· «Առէք դհամար ամենայն ժողովրդեանն» (Թիւք Ա. 2), «Զհամար նոցա մի՛ առնուցուս» (Թիւք Ա. 49), «Ոչ առնէին համար արանցն» (Դ Թագ ԺԲ 15)· սակայն երբեք չկայ առնու համար կրաւորական իմաստով· դրա փոխարէն ասուել է Այս է համար՝ «Այս է համար նոցա» (Ա. Մն ԻԴ. 19), «Այս էր համար հանապիղն» (Բ Մն ԼԱ. 17):

6· Սրբոց հաւատոց· հաւատք — հաւատոց–ի «կրօնաւորութիւն» ոչ դասական նշանակութեան մասին վերևում խօսեցինք· այստեղ տարօրինակ է նրա սրբոց որոշիչը· Մ· Աբեղեան՝ «սուրբ հաւատքի», տողատակում՝ «կրօնաւորութեան»· Նորայրն իր բնագրում պարզապէս դրել է «Սրբոյն», այսինքն՝ Մաչտոցի, նոյնը՝ իր Կորիւն–ի էջ 387–ում, որ Գ· Ֆնտզէեանը քննադատել է Նորայրին վերագրելով անտեղի ոգեւորութիւն· «Նորայր չմբռնելով դայս, և սրբոց–ը փոխանակ ածականի՝ յատկացուցիչ կարծելով "սուրբերուն հաւատքը" և միայն մէկ սուրբի՝ Մաշթոցի՝ վրայ խօսք ըլլալով, կ'ուզէ փոխել սրբոց հաւատոց–ը սրբոյն հաւատոց–ի, որ սխալ է»[23]: Ամենևին չենք կարծում, թէ Նորայրը այսպիսի բան էր մտածում, այլ, անշուշտ, նրան տարօրինակ էր թւում «սուրբ կրօնաւորութեան» հասկացութիւնը:

7· Ի չորրորդում ամէն· ի չորրորդում ներդեալ և ի...ամէ բացառական հոլովական բացայայտ անհամաձայնութիւնը չի անհանգստացրել ոչ մի բանասէրի· Մ· Աբեղեանը թարգմանել է «չորրորդ տարուց»: Մինչդեռ յաջորդ տողում ճիշտ է յուրբերորդ ամէ: ՍԳ–ում հպատանք ի չորրորդ ամէն, յամէն չորրորդէ կամ ի չորրորդէ ամէն, այլ նոյնիսկ դէպքի սկիզբը նշուել է յամի(ն) ներդեալով, որ միանգամայն ճիշտ է իմաստի տեսակէտից· ուստի եթէ ի չորրորդում ամէն–ը ընդմիջարկողին է, ապա բա-

[22] Գ· Ֆնտզէեան, վարք Մաշթոցի, էջ 75:

[23] Գ· Ֆնտզէեան, ն· տ·, էջ 76:

յայտայտ սխալ է· բայց դուցէ նա գրել էր «ի չորրորդում ամ[ի]ն»:

Կորիւնի զրքի ընթերցանութիւնն այսօր կատարում է Մանուկ Աբեղեանի հրատարակութեամբ· Երեւանում վերահրատարակուեց 1980 թ· է· Ա· Պիլոզեանի խմբագրութեամբ, սրբագրուել են որոշ վրիպակներ, սակայն բնագրում կան դասական զրաբարի բառապաշարի և քերականութեան դէմ մեղանչումներ, որոնք զալիս են օգտագործուած ձեռագրերից· օրինակներն աւելորդ են, պէտք է վերանայել հրատարակութիւնը՝ օգտագործելով բոլոր տուեալները: Ժամանակին բնաչէր կարապետ եղեանցին է պատկանել պատմագիրների ժողովածու մի ստուար ձեռագիր, որ յայտնի է իբրև «Ձեռագիր զրեալ ձեռամբ Աբրահամ երիցու ի Տիգրան քաղաքի ի թուին Հայոց ՌՃԺԷ, Քրիստոսի 1668», որի նկարագրութիւնը կատարել է Սո· Մալխասեանցն Ասողիկի «Պատմութեան» իր հրատարակութեան առաջաբանում, Պետերբուրգ, 1885, և որի մասին մի քանի խօսք ասուել է նաև Ագաթանգեղոսի 1909 (Տփղիս) քննական հրատարակութեան յառաջաբանի էջ իե–ում: Այդ ձեռագրում կայ նաև Կորիւնի երկը, որ Մ· Աբեղեանը չի օգտագործել[24]: Մեզ թւում է, որ քերականական բացայայտ սխալների դէպքում անհրաժեշտ է քննական մօտեցում, ինչպէս վարուել է Հ· Ն· Ակինեանը Կորիւնի երկի իր հրատարակութեան մէջ:

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ
Թբլիսի համալսարան

[24] կարծում ենք, որ Նորայր Ն· Բիւզանդացին ժամանակին այդ ձեռագրից ընդօրինակել է նաև Կորիւնի երկը· պէտք է ասուզել նրա դիւանում (Շուէդիայի երկը· պէտք է ասուզել նրա դիւանում (Շուէդիայի գիտութիւնների քաղաքի համալսարանի գրադարանում, Գէօթեբորգ քաղաքի համալսարանի գրադարանում, կազմուած 22 տեարերի մէջ):

© National Library of Armenia